ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻՆ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՍՊԱՍԱՒՈՐՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲՈՒՆԻԱԹԵԱՆ, ՈՐ Ի ԼՎՈՎ, ՈՒԿՐԱԻՆԱ

Ամենայն Հայոց Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր ողջոյնն ու օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ Մայր Եկեղեցու հաւատարիմ սպասաւորիդ:

Սիրելի Սրբազան, քաջատեղեակ ենք Ֆրանսիայի, Արգենտինայի, Շիրակի եւ Արմաւիրի հայոց թեմերում ծաւալած եկեղեցաշէն Ձեր գործունէութեանը, որով Դուք Ձեր ներդրումն էք բերել Մայր Աթոռիս առաքելութեան արդիւնաւէտ իրականացմանը՝ արժանիօրէն վստակելով յարգանքը մերազնեայ հաւատացեալների:

Նկատի առնելով հոգեւոր-քարոզչական անձանձիր Ձեր գործունէութիւնը եւ հայկական տարբեր համայնքներում հոգեւոր ծառայութեան Ձեր փորձառութիւնը, ուրախութիւն է Մեզ համար Հայրապետական այսու Կոնդակով ծառայութեան կոչել Ձեզ Ուկրաինայի հայոց թեմում որպէս առաջնորդ:

Վստահ ենք, որ նախանձախնդրութեան նոյն ոգով ու գիտակցութեամբ պիտի լծուէք Ձեր առաքելութեան իրականացմանը՝ հովուելով եւ առաջնորդելով հաւատաւոր ուկրաինահայութեան ընթացքը դէպի հոգեւոր ու ազգային նկարագրի անխաթար պահպանում եւ Աւետարանի լոյս պատգամների եւ նուիրական մեր արժէքների ու աւանդների շուրջ համախմբում:

Աղօթում ենք առ Բարձրեալն Աստուած, որ Տէրը պարգեւի Ձեզ քաջառողջութիւն, արեւշատ կեանք եւ առաջնորդական արգասաւոր գործունէութիւն՝ ի պայծառութիւն Առաքելական մեր Մայր Եկեղեցւոյ եւ Ուկրաինայի հայոց թեմի, յուրախութիւն Տիրախնամ թեմիդ հոգեւոր դասի եւ ի մխիթարութիւն Ուկրաինայի բարեպաշտ հայորդիների:

Շնորք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեսեանդ. Ամէն:

Սիրոյ ողջունիւ և օրհնութեամբ,
Աղօթարար՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 5-ն Մայիսի
յամի Տեառն 2001 եւ ի թուին Հայոց ՌՆԾ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 55